DOI: 10.54503/1829-4324.2023.2-220

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՐՑԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ

«Մանկական աղքատությունն ավելի է, քան պարզապես դրամական կարիքը. այն բազմաթիվ այլ դրսևորումներ ունի: Աղքատության պայմաններում ապրող երեխաները զրկված են բազմաթիվ բաներից, որոնց առկայությունը շատերս բնական ենք համարում: Երեխաների համար աղքատ լինել նշանակում է զրկված լինել իրենց համար կարևորագույն կենսապայմաններից, մասնավորապես՝ սննդից, կրթությունից, հանգստից կամ բնակարանային պայմաններից: Նման խոցելիությունը կարող է ավելի հեռուն գնացող հետևանքներ ունենալ, քան պարզապես դրամական աղքատությունը: Այն կարող է ազդել ոչ միայն երեխայի ներկա կյանքի որակի, այլև՝ հետագայում իր ներուժը զարգացնելու երեխայի կարողության վրա»[1]:

Տանյա Ռադոչայ

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ

Գոհար Վազգենի Վարդանյան
Գառնիկ Լյովայի Մամիկոնյան

Հոդվածը ստացվել է՝ 29.09.23, ուղարկվել է գրախոսման՝ 02.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Գաղտնիք չէ, որ երեխաները շատ ավելի են ենթակա աղքատության ռիսկին, քան բնակչության որևէ այլ տարիքային խումբ և այն հատկապես առավել վնասակար է, եթե վերջինս կրում է երկարաժամկետ բնույթ: Մանկական աղքատությունն իր դրսևորումներով զգալիորեն տարբերվում է մեծահասակների աղքատությունից, քանի որ այն արտահայտվում է մի խումբ զրկանքներով, որոնք բացասական ազդեցություն են ունենում երեխայի ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգեկան զարգացման վրա:

Հոդվածի արդիականությունը: Մանկական աղքատության խնդիրը ժամանակակից գիտական և հասարակական դիսկուրսում (խոսույթում, այսինքն՝ իր իրացման պայմանների ամբողջության մեջ) համարվում է հետազոտությունների առավել արդիական և զարգացող ոլորտներից: Մանկական աղքատության երևույթը ուսումնասիրվել և դրա գնահատականը տրվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) կողմից տարբեր տարիներին և տարբեր երկրներում անց կացված ուսումնասիրությունների նյութերում և զեկույցներում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետաքրքրվածությունը մանկական աղքատության հիմնախնդրի ուսումնասիրությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ երեխաների՝ աղքատության

[1] «Մանկական աղքատությունը Հայաստանում. բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն-2016» տարեկան զեկույց, ՀՀ ԱՎԾ (այն ժամանակ դեռևս չէր անվանվել Վիճակագրական Կոմիտե) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, էջ 5, 74 էջ

պատճառով զրկված կյանքի հնարավորություններից օգտվելու անկարողությունը հանգեցնում է անդառնալի փոփոխությունների ինչպես իրենց հետագա կյանքում, այնպես էլ այն հասարակության կյանքում, որտեղ նրանք ապրում են Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակվում են միայն ՀՀ ՎԿ-ի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված հետազոտություններով (ընդ որում վերջինս արձանագրվել է միայն 2016 թվականին անց կացված ուսումնասիրությամբ, դրանից հետո չի կատարվել մանկական աղքատության հետզոտություններ):

Այդ իսկ պատճառով էլ **հոդվածում նպատակ է դրվել ուսումնասիրել** մանկական աղքատության դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում, որը իր մեջ ներառում է հետևյալ **խնդիրները.**

- վերլուծել մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում 2008-2021 թթ. ընկած ժամանակահատվածում;
- վերլուծել մանկական աղքատության ցուցանիշների մակարդակը ըստ տարածաշրջանների՝ մարզերի:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Տարբեր զեկույցներում, հետազոտական նյութերում, իրավաբանական հանրագիտարաններում և բառարաններում գոյություն ունի «մանկական աղքատության» հետևյալ աշխատանքային սահմանումը. «Աղքատության մեջ ապրող երեխաները չունեն գոյատևման, զարգացման և բարեկեցության համար անհրաժեշտ նյութական, հոգևոր և էմոցիոնալ ռեսուրսներ, ինչը հնարավորություն չի տալիս նրանց օգտվել իրենց իրավունքներից, լիարժեքորեն բացահայտելու իրենց ներուժը կամ մասնակցելու հասարակության կյանքին՝ որպես պոտենցիալ և իրավահավասար անդամների: Աղքատությունը երեխաների զարգացման հիմնական խոչընդոտն է, քանի որ հաճախ ամենաաղքատ, առավել անապահով երեխաները հայտնվում են բարձր ռիսկային իրավիճակներում: Նրանցից շատերը ապրում են կամ աշխատում են փողոցում՝ տանը նրանց հանդեպ ցուցաբերած բռնությունների, քաղաքացիական անկարգությունների կամ պարզապես ավելի լավ կյանք փնտրելու ցանկության արդյունքում»[1]:

---

[1] «Մանկական աղքատության խնդիրը հեռանկարում. Երեխաների բարեկեցության նկարագիրը հարուստ երկրներում: Երեխաների և դեռահասների կյանքի ու բարեկեցության համապարփակ վերլուծություն տնտեսապես զարգացած երկրներում», ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2007 թ.-ի զեկույց, «Մանկական աղքատությունը Ռուսաստանում. Անհանգստացնող միտումներ և ռազմավարական գործողությունների ընտրություններ», Լ.Ն.Օվչարովա, Դ.Օ.Պոպովա, Սոցիալական քաղաքականության Անկախ ինստիտուտ, մեջբերվում է ՌԴ և Բելառուսի Հանրապետության ներկայացուցիչ Կառել Դե Ռոյի խոսքը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), Մոսկվա2005, էջ 2-3, 80 էջ, տե՛ս նաև Իրավաբանական հանրագիտարանի “Երեխայի իրավունքների գծով տերմինների բառարան”-ում(ռուսերեն լեզվով):
https://www.unicef-irc.org/publications/pdf/rc7_rus.pdf,
https://perm-deti.ru/wp-content/uploads/2016/08/detskay_bednost.pdf
http://multilang.etalonline.by/ru?type=3&term

Կարծիք կա, որ գոյություն ունի սերտ փոխկախվածություն վաղ մանկության հասակից երեխաների աղքատության և այդ երեխաների կյանքում այնպիսի չբավարարված արդյունքների միջև, որոնք ձեռք են բերվել նրանց՝ դպրոցում սովորելու ժամանակ, վատ առողջության, դեռահասության շրջանում նրանց հղիանալու հնարավորության, թմրամիջոցներից կախվածության, հանցավոր և հակասոցիալական վարքագծի, ցածր աշխատավարձի մակարդակի, գործազրկության և սոցիալական ապահովությունից եղած երկարաժամկետ կախվածության միջև: Թեև «նյութական կամ եկամտային աղքատությունը» մանկական աղքատությունը բնութագրող ամենապարզագույն ցուցանիշն է, չպետք է անտեսել մանկական աղքատության մակարդակի վրա ազդող շատ այլ դժվար չափելի գործոնները, ինչպիսիք են՝ սերն ու խնամքը, որ երեխան ստանում է ընտանիքում, անվտանգության զգացումը, ինչը երեխան զգում է իր ընտանեկան միջավայրում, այն ժամանակը, որը ծնողները ծախսում են երեխաների վրա՝ նրանց դաստիարակելու և խնամելու հմտություններին զուգահեռ, ընկերները, որոնք երեխաները ունեն համատեղ կյանքում, ուր նրանք ապրում են, և այն սոցիալական միջավայրի որակը, որտեղ նրանք մեծանում են:

Մանկական աղքատության թեման հատկապես խորն է ուսումնասիրված ռուսաստանյան տնտեսագետների և սոցիոլոգների կողմից, դրանց թվում է՝ Ն.Ե Տիխոնովայի, Ս.Վ.Մարեևայի, Ե.Դ.Սլոբոդենյուկի, Վ.Ա.Անիկինի, Մ.Վ.Եֆրեմովայի, Օ.Վ.Պոլուէկտովայի, Լ.Ն.Օվչարովայի, Դ.Օ.Պոպովայի, Ա.Ա.Տկաչենկոյի, Օ.Ս.Ռուդնևայի, Ա.Ա.Սոկոլովի և այլոց գրքերը, հոդվածները, հետազոտությունների նյութերը: Այդ ամենին մենք հանգամանորեն կանդրադառնանք գրականության վերլուծության բաժնում:

Գրականության վերլուծություն: Ներկայումս աղքատության և անհավասարության երևույթը ակտիվորեն ուսումնասիրվում է թե' արտասահմանյան, և թե' հայրենական գրականության մեջ, իսկ բնակչության մեջ աղքատների կատեգորիայի/խմբի համալիր բնութագրերը մշակվել են շնորհիվ աղքատների՝ որպես սոցիալական խմբի վերաբերյալ տնտեսագետների և սոցիոլոգների ժամանակակից աշխատանքներում:[1] Այդ աշխատություններից առավել ուշագրավ են Ն.Ե Տիխոնովայի և Ս.Վ.Մարեևայի[2] (ովքեր վերլուծել են աղքատության և հարստության

https://determiner.ru/slovari/slovar-terminov-po-pravam-rebenka.html

[1] «Бедность и бедные в современной России»; Москва, изд-во «Весь мир», 2014, под общей редакцией М.К.Горшкова., Н.Е.Тихоновой, глава 1, стр. 13-34, Н.Е Тихонова «Гетерогенность бедности в современной России»; 304 страниц; Н.Е Тихонова, Е.Д.Слободенюк-«Гетерогенность российской бедности через призму депривационного и абсолютного подходов», журнал «Общественные науки и современность», N 1, 2014, М.: «Наука», стр. 36-50.

[2] С.В.Мареева, Н.Е.Тихонова,« Бедность и социальные неравенства в России в общественном сознании», «Мир России: Социология, этнология», 2016. № 25 (2). С. 37—67. https://mirros.hse.ru/article/view/4902
Н.Е. Тихонова , «Феномен бедности в современной России », журнал «Социологические исследования». 2014. №. 1. С. 7—19

մասին սոցիալական պատկերացումները), Ե.Դ.Սլոբոդենյուկի և Վ.Ա.Անիկինի[1] (ովքեր ուսումնասիրել են աղքատության տարբեր գործոնները և ձևերը), Մ.Վ.Եֆրեմովայի և Օ.Վ.Պոլուէկտովայի (ովքեր ուսումնասիրել են մեծահասակների և երեխաների աղքատության փոխկախվածությունները անհատի հոգեբանական բնութագրիչների համատեքստում) տողատակում բերված աշխատությունները:

Լ.Ն.Օվչարովայի, Դ.Օ.Պոպովայի «Մանկական աղքատությունը Ռուսաստանում. Անհանգստացնող միտումներ և ռազմավարական գործողությունների ընտրություններ»[2] գրքում/հետազոտության մեջ հիմնական շեշտադրումը կատարվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ՌԴ և Բելառուսի Հանրապետության ներկայացուցիչ Կառել Դե Ռոյի 2005թ.-ի հոկտեմբերի 5-ին հրապարակված զեկույցի վրա, ուր նշված է, որ՝ «Երեխաների կյանքում հնարավորությունները չպետք է որոշվեն նրանց ծննդյան հետ կապված հանգամանքներով: Սակայն, սոցիալական վիճակագրության և ամենօրյա փորձի տվյալների հիման վրա ձեռք բերված ապացույցները փաստում են, որ նրանք, ովքեր մեծանում են աղքատության մեջ, գտնվում են ակնհայտ և շոշափելի ոչ բարենպաստ վիճակում: Հետևաբար, մանկական աղքատության բարձր մակարդակը իրենից ներկայացնում է հնարավորությունների հավասարության պարզորոշ/ոչ երկիմաստ հակասություն»:

Ա.Ա.Տկաչենկոն իր «Մանկական աղքատություն. ֆենոմենը և երևույթը» հոդվածում գրում է՝«Մանկական աղքատությունը պայմանավորված է չորս փոխկապակցված բնութագրերով՝ ընտանիքի ցածր եկամուտ, վատ կենսապայմաններ, ցածր կրթական մակարդակ, թերսնման բարձր մակարդակ (միաժամանակ կարելի է ավելացնել նաև՝աղքատ ընտանիքների երեխաները ենթակա են բռնության տարբեր ձևերի բարձր ռիսկի): Ծայրահեղ աղքատության մակարդակի եկամուտ ունեցող ընտանիքներում ապրող երեխաները դատապարտված են անբավարար կենսաբանական և ճանաչողական զարգացման: Աղքատության ազդեցությունը երեխաների վրա առանձնանում է աղքատության ընդհանուր

---

https://publications.hse.ru/articles/123878943
Н.Е. Тихонова ,.« Низший класс в социальной структуре российского общества», журнал « Социологические исследования»., 2011. №. 5. С. 24—35.
https://publications.hse.ru/articles/71831490

[1] Е.Д.Слободенюк, В.А. Аникин , «Где пролегает «черта бедности» в современной России?», журнал «Вопросы экономики», 2018. № 1. С. 104—127.
https://www.vopreco.ru/jour/article/view/372
Е.Д. Слободенюк,. «Особенности и структура социальной группы бедных в современной России», Terra Economicus. 2014. № 12 (4). С. 114—129.
https://ideas.repec.org/a/scn/031478/15721859.html
М.В.Ефремова, О.В.Полуэктова, «Взаимосвязь взрослой и детской бедности с психологическими характеристиками личности», « Социальная психология и общество », 2019. Т. 10. № 3. С. 118—136
https://psyjournals.ru/journals/sps/archive/2019_n3/Efremova_Poluektova

[2] Л.Н.Овчарова, Д.О.Попова, «Детская бедность в России: Тревожные тенденции и выбор стратегических действий», Независимый Институт Социальной политики, ЮНИСЕФ, 2005, стр.2, 80 страниц

ֆենոմենի երևույթից, քանի որ երեխաների վաղ զարգացումից է կախված նրանց ընդունակությունները և դերը ապագայում:»[1] Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակվում են միայն ՀՀ ՎԿ-ի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված հետազոտություններով:

Մեթոդաբանություն: Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակվում են միայն ՀՀ ՎԿ-ի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված հետազոտություններով: Ի դեպ, ՀՀ ՎԿ-ի կողմից այն յուրաքանչյուր տարի հրապարակվում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»[2] վիճակագրական-վերլուծական զեկույցում, որը անց է կացվում Համաշխարհային բանկի հետ համատեղ՝ ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, իսկ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այն ժամանակ դեռևս չէր կոչվում Վիճակագրական Կոմիտե) հետ համատեղ 2016 թվականին անցկացրեց Հայաստանում մանկական աղքատության բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն, ինչը և ամփոփվեց նրա տարեկան զեկույցում[3]: Հարկ է նշել, որ միայն վերոնշյալ երկու աղբյուրներից է հնարավոր ստանալ տվյալներ Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալ կիրառված մեթոդաբանության հետ: Վերոնշյալ հետազոտությունները ընդգրկում են ՀՀ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (ՏՏԿԱՀ) տվյալները: Տվյալ հետազոտությունների շրջանակներում հարցման է ենթարկվում հայաստանյան տնային տնտեսությունների երկրի մակարդակով ներկայացուցչական ընտրանքը և այն համարվում է աղքատության ազգային վիճակագրության պաշտոնական աղբյուրը: Ընդ որում, իրականացվել է Յունիսեֆի կողմից պատվիրակված 6-ից 17 տարեկան երեխաների կարիքների գնահատման մոդուլով (Child Needs Module) հարցում:

Հոդվածում հեղինակների կողմից կիրառվել են նաև վիճակագրական ժամանակագրական շարքերի վերլուծության, կառուցվածքի և համեմատության հարաբերական մեծությունների հաշվարկման մեթոդները:

---

[1] А.А.Ткаченко, «Детская бедность: Феномен и явление», « НАРОДОНАСЕЛЕНИЕ» Т. 25. № 1. 2022, стр.44.

[2] https://armstat.am/file/article/poverty_2022_a_00.pdf

[3] «Մանկական աղքատությունը Հայաստանում. բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն-2016» տարեկան զեկույց, ՀՀ ԱՎԾ (այն ժամանակ դեռևս չէր անվանվել Վիճակագրական Կոմիտե) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, https://www.unicef.org/armenia

Վերլուծություն: Վերը բարձրացված խնդիրների ուսումնասիրության նպատակով կազմենք ներքոհիշյալ աղյուսակները: Աղյուսակ 1-ում հավաքագրել ենք տվյալներ ՀՀ-ում մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան վերլուծելու համար: Ինչպես վկայում են աղյուսակ 1-ի տվյալները, Հայաստանում մանկական աղքատության ցուցանիշները վերջին 14 տարիների ընթացքում , ցավոք, գրանցել են աճման միտումներ: Այսպես, նշված ժամանակահատվածում աղքատ երեխաների մասնաբաժինը երեխաների ընդհանուր թվաքանակում 29,8% -ից դարձել է 35,3%, կամ՝ աճել է 5,5 % -ով, ընդ որում դրանցից ծայրահեղ աղքատ երեխաների մասնաբաժինը 1,6 % -ից դարձել է 2,5 %, գրանցելով 0,9 % աճ: Հարկ է նշել, որ նշված ցուցանիշները բարձր մակարդակներ են գրանցել 2010-2016 թվականներին, այնուհետև, հատկապես 2019 թվականին (2008թ.-ի համեմատությամբ աճը կազմել է 21,9 % և նախորդ տարվա՝2018 թվականի համեմատությամբ՝ 22,5 %):

Աղյուսակ 1

Մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում 2008-2021 թթ. (տոկոսներով)*[1]

Տարեթվեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ	Բացարձակ հավելաճը(+)/հավելյալ նվազումը(-) բազիսային եղանակով, աղքատ/ծայրահեղ աղքատ	Բացարձակ հավելաճը(+)/հավելյալ նվազումը(-) շղթայական եղանակով, աղքատ/ծայրահեղ աղքատ
2008 թ.	1,6	29,8	70,2	-	-
2009 թ.	3.8	35.7	64.3	5,9 /2,2	5,9 / 2,2
2010 թ.	3.7	41.4	58.6	11,6 / 2,1	5,7 / - 0,1
2011 թ.	4,7	41,9	58,1	12,1/ 3,1	0,5 /1,0
2012 թ.	3,3	36,2	63,8	6,4 / 1,7	-5,7/-1,4
2013 թ.	3,3	37,3	62,7	7,5 /1,7	1,1/0
2014 թ.	3,3	34,0	66,0	4,2/ 1,7	3,3/0
2015 թ.	2,5	33,7	66,3	3,9/ 0,9	-0,3/-0,8
2016 թ.	2,0	34,2	65,8	4,4/ 0,4	0,5/ -0,5
2017 թ.	2,1	30,8	69,2	1,0/ 0,5	-3,4/ 0,1
2018 թ.	1,5	29,2	70,8	-0,6/-0,1	-1,6/ -0,6
2019 թ.	2,3	51,7	48,3	21,9/0,7	22,5/ 0,8
2020 թ.	1,0	33,9	66,1	4,1/-0,6	-17,8/-1,3
2021 թ.	2,5	35,3	64,7	5,5/0,9	1,4/1,5

[1] Աղյուսակը կազմվել, որոշ տվյալներ դուրս են բերվել և հաշվարկվել է հեղինակների կողմից «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական - վերլուծական զեկույցի 2018-2022թթ.հրատարակությունների տվյալների հիման վրա, ՀՀ ՎԿ, armstat.am, 2018թ., էջ 92-93,
https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_00.pdf
https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

Ամենացավալին այն է, որ 2019 թվականին երեխաների ընդհանուր թվաքանակում մանկական աղքատության ցուցանիշի մասնաբաժինը եղել է ավելի բարձր, քան ոչ աղքատ երեխաների մասնաբաժինը՝ աղքատ՝ 51,7 % և ոչ աղքատ՝ 48,3 %, այսինքն՝ երեխաների ողջ թվաքանակում աղքատ երեխաների մասնաբաժինը 3,4 %-ով գերազանցել է ոչ աղքատ երեխաների մասնաբաժնին: Ներքոհիշյալ թիվ 1 քարտեզում ներկայացված է մանկական աղքատության ցուցանիշների պատկերը ըստ մայրաքաղաք Երևանի և ՀՀ մարզերի[1]:

Քարտեզ 1. **Հայաստան. Ըստ սպառման ազրեգատի մանկական աղքատության մակարդակը մարզերով և ք. Երևանով, 2021թ.**

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2021թ.

Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է ըստ մարզերի:

Փաստորեն Հայաստանում, ինչպես արտապատկերված է քարտեզում, ըստ սպառման ազրեգատի մանկական աղքատության մակարդակը մարզերում և քաղաքամայր Երևանում 2021թ. ունեցել է հետևյալ պատկերը. ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Գեղարքունիքում(57,2 %), Շիրակում (56,5 %), Տավուշում (46,9 %), Արմավիրում (44,6 %), Վայոց Ձորում (35,4 %), Արարատում (35,4 %),

[1] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»- 2022թ, էջ 70 https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

Կոտայքում (33,0 %): Համեմատաբար ցածր մակարդակներ են գրանցվել քաղաքամայր Երևանում (22,3 %), Արագածոտնում (16,6 %), Լոռվա մարզում (27,7 %), Սյունիքում (4,2 %): Հանրապետությունում ամենացածր մակարդակը եղել է Սյունիքում, իսկ ամենաբարձրը՝ Գեղարքունիքում:

Աղյուսակ 2

Մանկական աղքատության մակարդակը քաղաքամայր Երևանում և մարզերում 2009, 2017, 2020 և 2021 թվականներին (տոկոսներով)[1]

Տարածաշրջաններ	2009 թ.		2017 թ.		2020 թ.		2021թ.	
	Աղքատ	Դրանցից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	Դրանցից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	Դրանցից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	Դրանցից՝ ծայրահեղ աղքատ
Երևան	30,0	2,6	26,9	1,7	25,9	0,0	22,3	0,7
Արագածոտն	31,2	2,3	10,9	0,0	40,1	4,2	16,6	0,0
Արարատ	41,3	3,7	28,9	3,1	37,9	0,0	35,4	2,3
Արմավիր	32,7	5,3	29,1	1,0	36,2	2,2	44,6	5,1
Գեղարքունիք	45,2	3,0	24,3	2,5	56,0	2,6	57,2	5,8
Լոռի	48,3	9,0	39,6	2,1	21,6	0,3	27,7	0,0
Կոտայք	44,4	7,7	34,6	0,6	21,1	0,0	33,0	4,0
Շիրակ	52,4	6,4	51,8	8,0	57,7	3,1	56,5	5,2
Սյունիք	26,5	2,5	25,2	0,0	9,3	0,0	4,2	0,0
Վայոց Ձոր	32,1	1,9	19,7	0,0	28,0	0,0	35,4	0,0
Տավուշ	39,1	2,1	33,7	2,2	46,1	1,5	46,9	1,3
Ընդհանուր	38,1	4,5	30,8	2,1	33,9	1,0	35,3	2,5

**Աղբյուրը . ՏՏԿԱՀ, 2009 թ., 2017 թ. , 2020 թ. և 2021թ.

Ինչպես երևում է աղյուսակ 2-ում բերված պաշտոնական վիճակագրական տվյալներից, մանկական աղքատության մակարդակը եղել է և դեռևս շարունակում է բարձր մակարդակների վրա մնալ և' մայրաքաղաքում, և թե' հանրապետության մարզերում: Իհարկե, բացի ամփոփ ցուցանիշներից, մանկական աղքատության ցուցանիշները ունեն նաև տարբեր դրսևորումներ նրանց տարբեր տարիքային խմբերում, հետևաբար՝ հարկավոր է առանձին-առանձին դիտարկել 0-5, 6-14 և 15-17 տարեկան երեխաների խմբերում մանկական աղքատության դրսևորման առանձնահատկությունները:

[1] Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական - վերլուծական զեկույցի 2018- 2022թթ. Հրատարակությունների տվյալների հիման վրա, ՀՀ ՎԿ, armstat.am, 2018թ., էջ 92-93
https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_00.pdf
https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf

Գիտական նորույթը: Հոդվածի **գիտական նորույթը** կայանում է հետևյալում.

– հեղինակների կողմից հավաքագրված տվյալների և նրանց կողմից ներկայացված վերլուծական նյութի հիման վրա նախ՝ **ցույց է տրվել** մանկական աղքատության երևույթի դրսևորման ամբողջական պատկերը և դրա առանձնահատկությունները ՀՀ-ում և ըստ նրա առանձին տարածաշրջանների;
- **բացահայտվել է** մանկական աղքատության երևույթի դինամիկան/շարժընթացը երկարատև ժամանակահատվածում՝ 2008թ-ից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում (այն ընդգրկում է վերջին 14 տարիներն ընկած ժամանակաշրջանը), քանի որ թե ՀՀ ՎԿ-ի, և թե ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետազոտությունները չունեն նման ամփոփ վիճակագրական գնահատականը նշված ժամանակաընթացքում, բացի այդ, բազիսային և շղթայական եղանակներով հաշվարկվել են մանկական աղքատության մակարդակի փոփոխությունները ըստ առանձին տարիների ;
- հեղինակների կողմից հավաքագրված և համընդհանուր ձևով ներկայացված տվյալների հիման վրա **վեր է հանվել** մանկական աղքատության պատկերը ըստ ՀՀ-ի առանձին տարածաշրջանների:

Եզրակացություն: Ինչպես փաստում են թե պաշտոնական վիճակագրական տվյալները, և թե հոդվածում կատարված վերլուծությունները, ուսումնասիրված ողջ ժամանակահատվածում ՀՀ-ում ամբողջությամբ վերցրած և նրա առանձին տարածաշրջաններում մանկական աղքատության մակարդակը եղել է և դեռևս շարունակում է բարձր մնալ, ինչը բացասաբար է անդրադառնում թե ներկայիս իրավիճակի վրա, և թե հետագայում առողջ, կրթված, մտավոր զարգացած սերունդներ ունենալու մեր հնարավորությունների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Бедность и бедные в современной России»; Москва, изд-во «Весь мир», 2014, под общей редакцией М.К.Горшкова., Н.Е.Тихоновой, глава 1, стр. 13-34, Н.Е Тихонова «Гетерогенность бедности в современной России»; 304 страниц
2. Н.Е Тихонова, Е.Д.Слободенюк- «Гетерогенность российской бедности через призму депривационного и абсолютного подходов», журнал «Общественные науки и современность», N 1, 2014, М.: «Наука», стр. 36-50.
3. С.В.Мареева, Н.Е.Тихонова, «Бедность и социальные неравенства в России в общественном сознании», «Мир России: Социология, этнология», 2016. № 25 (2). С. 37—67.
4. Н.Е. Тихонова, «Феномен бедности в современной России», журнал «Социологические исследования». 2014. №. 1. С. 7—19
5. Н.Е. Тихонова ,.« Низший класс в социальной структуре российского общества», журнал « Социологические исследования»., 2011. №. 5. С. 24—35.
6. Е.Д.Слободенюк, В.А. Аникин , «Где пролегает «черта бедности» в современной России?», журнал «Вопросы экономики», 2018. № 1. С. 104—127.

7. Е.Д. Слободенюк,. «Особенности и структура социальной группы бедных в современной России», Terra Economicus. 2014. № 12 (4). С. 114—129.
8. М.В.Ефремова, О.В.Полуэктова, «Взаимосвязь взрослой и детской бедности с психологическими характеристиками личности», «Социальная психология и общество », 2019. Т. 10. № 3. С. 118—136.
9. Л.Н.Овчарова, Д.О.Попова, «Детская бедность в России: Тревожные тенденции и выбор стратегических действий», Независимый Институт Социальной политики, ЮНИСЕФ, 2005, стр.2, 80 страниц.
10. А.А.Ткаченко, «Детская бедность: Феномен и явление», «НАРОДОНАСЕЛЕНИЕ» Т. 25. № 1. 2022 , стр.44.
11. Մանկական աղքատությունը Հայաստանում. բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն-2016» տարեկան զեկույց, ՀՀ ԱՎԾ (այն ժամանակ դեռևս չէր անվանվել Վիճակագրական Կոմիտե) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, էջ 5, 74 էջ
12. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույց, 2018-2022թթ.հրատարակությունների տվյալներ, ՀՀ ՎԿ, armstat.am
https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_00.pdf
https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf
13. «Մանկական աղքատության խնդիրը հեռանկարում. Երեխաների բարեկեցության նկարագիրը հարուստ երկրներում: Երեխաների և դեռահասների կյանքի ու բարեկեցության համապարփակ վերլուծություն տնտեսապես զարգացած երկրներում», ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2007 թ.-ի զեկույց, «Մանկական աղքատությունը Ռուսաստանում. Անհանգստացնող միտումներ և ռազմավարական գործողությունների ընտրություններ», Լ.Ն.Օվչարովա, Դ.Օ.Պոպովա, Սոցիալական քաղաքականության Անկախ ինստիտուտ, մեջբերվում է ՌԴ և Բելառուսի Հանրապետության ներկայացուցիչ Կառել Դե Ռոյի խոսքը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), Մոսկվա2005, էջ 2-3, 80 էջ, տե՛ս նաև Իրավաբանական հանրագիտարանի «Երեխայի իրավունքների գծով տերմինների բառարան»-ում(ռուսերեն լեզվով):

References

1. «Bednost i bednye w sovremennoj rossii» ;Moskwa, izdatelstvo «Ves Mir», 2014, pod obshchej redakciej M.K.Gorshkowa, N.E.Tihonowoj, glawa 1, str. 13-34, N.E.Tihonowa «Geterogennost bednosti w sovremennoj Rossii»; 304 stranic.

2. N.E.Tihonowa, E.D. Slobodenyuk «Geterogennost rossijskoj bednosti cherez prizmu deprivacionnogo i absolyutnogo podxodow», jurnal «Obshestvennye nauki i sovremennost», N 1, 2014, M.: «Nauka», str. 36-50.
3. S.W.Mareewa, N.E.Tihonowa,« Bednost i socialnye nerawenstva wRossii w obchestvennom soznanii» , «Mir Rossii: Sociologiya, etnologiya», 2016. № 25 (2). Str.. 37—67.
4. N.E.Tihonowa, «Fenomen bednosti w sovremennoj Rossii», jurnal «Sociologicheskie issledovaniya». 2014. №. 1. Str. 7—19.
5. N.E.Tihonowa,. «Nizshij klass w socialnoj strukture rossijskogo obshchestva», jurnal «Sociologicheskie issledowaniya»., 2011. №. 5.str. 24—35.
6.Ye.D. Slobodenyuk, W.A.Anikin , «Gde proletaet «cherta bednosti» w sovremennoj Rossii?», jurnal «Voprosi Ekonomiki», 2018. № 1. str. 104—127.
7. Ye.D. Slobodenyuk, «Osobennosti i struktura socialnoj gruppi bednyx w sovremennoj Rossii», Terra Economicus. 2014. № 12 (4). str. 114—129.
8. M.W.Yefremowa, O.W.Poluektowa, «Wzaimosvyaz wzrosloj i detskoj bednosti s psixologicheskimi xarakteristikami lichnosti», «Socialnaya psixologiya i obschestwo », 2019.Volume 10. № 3. Str. 118—136.
9. L.N. Oecharowa, D.O.Popowa, «Detskaya bednost w Rossii :Trevoghniye tendencii i vibor strategicheskix dejstwiij», Nezavisimij Institut Socialnoj Politiki, YUNISEF, 2005, str. 2, 80 stranic.
10. A.A.Tkachenko, «Detskaya bednost: Fenomen i yawlenie», «NARODONASELENIE», Volume 25. № 1. 2022 , str.44.
11. Mankakan axqatutyuny Hayastanum. Bazmaki yev hamynknox xoceliutyan azgayin verlusutyun-2016» tarekan zekuyc, HH AVTS (ayn jamanak deryevs cher anvanvel Vichakagrakan Komiteայն) yev MAK-i mankakan himnadrami hayatanyan grasenyak, ej 5, 74 ej.
12. «Hayastani socialakan patkery yev axqatutyuny» vichakagrakan-verlucakan zekuyc, 2018-2022tt. Hratarakutyunneri tvyalner, HH VK, armstat.am
https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_00.pdf
https://armstat.am/file/article/poverty_2019_a_2.pdf
https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf
https://armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf
13. «Mankakan axqatutyan xndiry herankarum. Yerexaneri barekecutyan nkaragiry harust yerkrnerum. Yerexaneri yen derahasneri kyanqi u barekecutyan hamaparpak verlusutyun tntesapes zargacac erkrnerum», MAK-i Mankakan himnadram (YUNISEF), 2007t.-i zekuyc, «Mankakan axqatutyuny Rusastanum. Anhangstacnox mitumner yev razmavarakan gorcoxutyunneri yntrutyunner», L.N.Ovcharowa. D.O. Popowa, Socialakan qaxaqakanutyan Ankax institut, Moskwa 2005, 80 ej, tes nayev

Iravabanakan hanragitarani «Yerexayi iravunqneri gcov terminneri bararan»-um (ruseren lezvov).

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՐՑԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ

Գոհար Վազգենի Վարդանյան
Գառնիկ Լյովայի Մամիկոնյան

Համառոտագիր: Գաղտնիք չէ, որ երեխաները շատ ավելի են ենթակա աղքատության ռիսկին, քան բնակչության որևէ այլ տարիքային խումբ և այն հատկապես առավել վնասակար է, եթե վերջինս կրում է երկարաժամկետ բնույթ: Մանկական աղքատությունն իր դրսևորումներով զգալիորեն տարբերվում է մեծահասակների աղքատությունից, քանի որ այն արտահայտվում է մի խումբ զրկանքներով, որոնք բացասական ազդեցություն են ունենում երեխայի ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգեկան զարգացման վրա:

Հոդվածի նպատակը: Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակվում են միայն ՀՀ ՎԿ-ի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված հետազոտություններով (ընդ որում վերջինս արձանագրվել է միայն 2016 թվականին անց կացված ուսումնասիրությամբ, դրանից հետո չի կատարվել մանկական աղքատության հետազոտություններ):

Այդ իսկ պատճառով էլ **հոդվածում նպատակ է դրվել ուսումնասիրել** մանկական աղքատության դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում, որը իր մեջ ներառում է հետևյալ **խնդիրները.**

- վերլուծել մանկական աղքատության ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում 2008-2021 թթ. ընկած ժամանակահատվածում;
- վերլուծել մանկական աղքատության ցուցանիշների մակարդակը ըստ տարածաշրջանների՝ մարզերի:

Մեթոդաբանություն: Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները սահմանափակվում են միայն ՀՀ ՎԿ-ի և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից անցկացված հետազոտություններով: Ի դեպ, ՀՀ ՎԿ-ի կողմից այն յուրաքանչյուր տարի հրապարակվում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում, որը անց է կացվում Համաշխարհային բանկի հետ համատեղ՝ ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, իսկ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այն ժամանակ դեռևս չէր կոչվում Վիճակագրական Կոմիտե) հետ համատեղ 2016 թվականին անցկացրեց Հայաս-

տանում մանկական աղքատության բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն, ինչը և ամփոփվեց նրա տարեկան զեկույցում: Հարկ է նշել, որ միայն վերոնշյալ երկու աղբյուրներից է հնարավոր ստանալ տվյալներ Հայաստանում մանկական աղքատության վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալ կիրառված մեթոդաբանության հետ: Վերոնշյալ հետազոտությունները ընդգրկում են ՀՀ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների (ՏՏԿԱՀ) տվյալները: Տվյալ հետազոտությունների շրջանակներում հարցման է ենթարկվում հայաստանյան տնային տնտեսությունների երկրի մակարդակով ներկայացուցչական ընտրանքը և այն համարվում է աղքատության ազգային վիճակագրության պաշտոնական աղբյուրը: Ընդ որում, իրականացվել է Յունիսեֆի կողմից պատվիրակված 6-ից 17 տարեկան երեխաների կարիքների գնահատման մոդուլով (Child Needs Module) հարցում:

Հոդվածում հեղինակների կողմից կիրառվել են նաև վիճակագրական ժամանակագրական շարքերի վերլուծության, կառուցվածքի և համեմատության հարաբերական մեծությունների հաշվարկման մեթոդները:

Գիտական նորույթը: Հոդվածի **գիտական նորույթը** կայանում է հետևյալում.

- հեղինակների կողմից հավաքագրված տվյալների և նրանց կողմից ներկայացված վերլուծական նյութի հիման վրա նախ՝ **ցույց է տրվել** մանկական աղքատության երևույթի դրսևորման ամբողջական պատկերը և դրա առանձնահատկությունները ՀՀ-ում և ըստ նրա առանձին տարածաշրջանների;
- **բացահայտվել է** մանկական աղքատության երևույթի դինամիկան/շարժընթացը երկարատև ժամանակահատվածում՝2008թ-ից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում (այն ընդգրկում է վերջին 14 տարիներն ընկած ժամանակաշրջանը), քանի որ թե ՀՀ ՎԿ-ի, և թե ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետազոտությունները չունեն նման ամփոփ վիճակագրական գնահատականը նշված ժամանակաընթացքում, բացի այդ, բազիսային և շղթայական եղանակներով հաշվարկվել են մանկական աղքատության մակարդակի փոփոխությունները ըստ առանձին տարիների;
- հեղինակների կողմից հավաքագրված և համընդհանուր ձևով ներկայացված տվյալների հիման վրա **վեր է հանվել** մանկական աղքատության պատկերը ըստ ՀՀ-ի առանձին տարածաշրջանների:

Բանալի բառեր. մանկական աղքատություն, աղքատության ռիսկ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, դինամիկա, նյութական կամ եկամտային աղքատություն, տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն:

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ДЕТСКОЙ БЕДНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ. СТАТИСТИЧЕСКИЙ АСПЕКТ ВОПРОСА

Гоар Вазгеновна Варданян
Гарник Леваевич Мамиконян

Аннотация. Ни для кого не секрет, что дети гораздо более подвержены риску бедности, чем любая другая возрастная группа населения, и это особенно вредно, если она носит долгосрочный характер. Детская бедность в своих проявлениях существенно отличается от бедности взрослых, так как она проявляется множеством депривиций, оказывающих негативное влияние на физическое, психическое, эмоциональное и умственное развитие ребенка.

Цель статьи. Исследования детской бедности в Армении ограничиваются только исследованиями, проводимыми Статистическим комитетом РА и Представительством ООН в Армении (а последнее зафиксировано только в исследовании, проведенном в 2016 году. С тех пор исследования детской бедности не проводились). Именно поэтому **целью** статьи является изучение особенностей детской бедности в РА, которая включает в себя следующие **задачи**:

- проанализировать динамику показателей детской бедности в РА за период 2008-2021 годов;
- проанализировать уровень показателей детской бедности по регионам РА.

Методология. В 2016 году армянское представительство Детского фонда ООН совместно с Национальной статистической службой Республики Армения провело национальный анализ множественных и совпадающих факторов уязвимости детской бедности в Армении, который был обобщен в его годовом отчете. Получить данные о детской бедности в Армении, как и можно только из двух вышеупомянутых источников. В статье авторами использованы методы анализа статистических временных рядов, также и расчета относительных величин структуры и сравнения.

Научная новизна статьи заключается в следующем:

- **показана** полная картина феномена детской бедности и ее особенностей в РА и по ее отдельным регионам
- **выявлена** динамика/тенденция явления детской бедности в долгосрочном периоде с 2008 по 2021 годы (охватывает последние 14 лет);
- **расскрыта** картина детской бедности по отдельным регионам РА.

Ключевые слова: детская бедность, риск бедности, Детский фонд ООН, динамика, материальная или доходная бедность, комплексное исследование уровня жизни домохозяйств.

CHARACTERISTICS OF THE MANIFESTATION OF CHILD POVERTY IN THE REPUBLIC OF ARMENIA: STATISTICAL ASPECT OF THE QUESTION

Gohar Vazgen Vardanyan
Garnik Lyova Mamikonyan

Abstract. It is no secret that children are much more susceptible to the risk of poverty than any other age group of the population and it is particularly harmful if it is of a long-term nature. Child poverty in its manifestations is significantly different from adult poverty, as it is manifested by a group of deprivations that have a negative impact on the physical, mental, emotional, and intellectual development of a child.

Purpose of the article. Studies on child poverty in Armenia are limited only to the research conducted by the RA Statistical Committee and the UN Office in Armenia (the latter's study was conducted in 2016; since then, there has been no research on child poverty). That is why the purpose of the article is to study the characteristics of child poverty in the Republic of Armenia, which is achieved through **the following tasks**:

- to analyze the dynamics of child poverty indicators in RA from 2008 to 2021;
- to analyze the level of child poverty indicators by RA regions.

Methodology. In 2016, the Armenian office of the UN Children's Fund, together with the RA Statistical Committee, conducted a national analysis of the multiple and overlapping vulnerabilities of child poverty in Armenia, which was summarized in its annual report. It is only possible to obtain data on child poverty in Armenia from the above-mentioned two sources, as well as be acquainted with the applied methodology. In the article, the authors used methods of statistical analysis of time series, as well as calculation of the relative values of the structure and comparison.

The scientific novelty of the article lies in the following:

- the article shows a complete picture of the phenomenon of child poverty and its characteristics in the RA and its individual regions,
- the dynamics/trend of the phenomenon of child poverty in the long period from 2008 to 2021 (it covers the last 14 years) was revealed,
- the picture of child poverty in individual RA regions was revealed.

Keywords: child poverty, risk of poverty, United Nations Children's Fund, dynamics, material or income poverty, comprehensive survey of household living standards.